



ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

HEALTH INSURANCE CONDITIONS

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից (29.11.2019թ. Խորհրդի նիստի թիվ 07 արձանագրություն)

CONFIRMED

By the Board of "ROSGOSSTRAKH-ARMENIA CJSC (N7 protocol of the Board session as of 29.11.2019)

ԲՈՎԱՆԴԱԿՈՆՁՅՈՒՆ

CONTENT

- 1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ
3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՅՐՆԵՐԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿՆԵՐԸ
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ
5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆԱՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆԱՐԻ ՅԵՐԹԱԿԱՆ ՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ, ԴԱՂԱՐԵՑՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ
8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱԿՈՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՆՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՆՏՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ
11. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒՇՄԱՆ ԿԱՐԳԸ
13. ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

- 1. THE SUBJECTS OF INSURANCE
2. THE OBJECTS OF INSURANCE
3. INSURANCE ACCIDENTS AND INSURANCE RISKS
4. SUM INSURED DEFINITION PROCEDURE
5. EFFECTIVE PERIOD OF THE INSURANCE CONTRACT/POLICY
6. PROCEDURE OF INSURANCE RATE, INSURANCE PREMIUM, INSTALLMENTS DEFINITION
7. PROCEDURE OF INSURANCE CONTRACT/POLICY CONCLUSION, CANCELLATION AND AMENDMENTS IMPLEMENTATION
8. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES
9. TERMS AND CONDITIONS OF INSURANCE INDEMNITY IMPLEMENTATION
10. INSURANCE INDEMNITY REFUSAL BASIS
11. LIABILITY OF THE PARTIES
12. TERMS OF DISPUTES SETTLEMENT
13. TERMINOLOGY USED IN THE CONDITIONS

Սույն ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և Ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից շնորհված թիվ ԱՊՈ 0009 Լիցենզիայի Առողջության ապահովագրություն դասին:

Present insurance conditions (hereinafter referred to as Conditions) are set according to the Civil Code and the law on Insurance and Insurance activity of RA and are in accordance with the class of health Insurance of the License N 0009 issued and provided by the Central Bank of the RA mentioned below.

Present Conditions are considered an integral part of insurance contracts signed in accordance with them.

Provisions of these Conditions may be changed (excluded and/or supplemented) when concluding the insurance contract or during its effective period, about which it is mentioned in the insurance contract. Similar changes cannot contradict the legislation of the RA.

Սույն Պայմանները հանդիսանում են վերջիններիս համաձայն կնքված ապահովագրության պայմանագրերի անբաժանելի մասը: Սույն Պայմանների դրույթները կարող են փոփոխվել (բացառվել և/կամ լրացվել) ապահովագրության պայմանագիր կնքելու պահին կամ դրա գործողության ժամկետի ընթացքում, ինչի մասին նշվում է ապահովագրության պայմանագրում: Նման փոփոխությունները չեն կարող հակասել ՀՀ օրենսդրությանը:

In accordance with these Conditions the insurance is effective only within the territory of the RA, unless it is otherwise provided for by the insurance contract.

Սույն Պայմանների համաձայն ապահովագրությունը գործում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով:

1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

1. THE SUBJECTS OF INSURANCE

1.1. Համաձայն սույն Պայմանների և ՀՀ գործող օրենսդրության՝ «ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ (այսուհետ՝ Ապահովագրող) կնքում է բժշկական ապահովագրության պայմանագրեր (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր) իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ (այսուհետ՝ Ապահովադիր)՝ տրամադրելով վերջիններիս կամ իրավաբանական անձանց աշխատողների (Պայմանագրով/Վկայագրով նախատեսված դեպքերում՝ նաև ընտանիքի անդամներին) առողջության հետ կապված բժշկական և/կամ այլ ծառայությունների գծով հատուցում՝ համաձայն սույն Պայմաններից բխող Ապահովագրողի կողմից առաջարկվող ապահովագրության ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր):

1.1. According to the present Conditions and acting legislation of the RA "ROSGOSSTAKH-ARMENIA" Insurance CJSC (hereinafter referred to as the Insurer) concludes medical insurance contracts (hereinafter referred to as the Contract/Policy) with natural persons and juridical entities (hereinafter referred to as Insured) providing the latter or the employees of the juridical entities (also the family members in the cases specified by the Contract/Policy) with medical and/or other services indemnities concerning to the health according to the insurance programs (hereinafter referred to as the Program) offered by the Insurer, which sequential from the present Conditions.

1.2. Ապահովագրության սուբյեկտներն են՝ Ապահովագրողը, Ապահովադիրը, Ապահովագրված անձը:

1.2. The subjects of the insurance are- the Insurer, the Insured, the Insured person.

1.3. Ապահովադիրը կնքում է Ապահովագրողի հետ Պայմանագիր իր օգտին կամ երրորդ անձանց օգտին (այսուհետ՝ Ապահովագրված անձինք): Ապահովադիրներ կարող են

1.3. The Insured signs a Contract/Policy on behalf of himself or on behalf of the third persons (hereinafter referred to as the Insured persons). The Insureds are considered to be:



հանդիսանալ՝

• ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք գրանցված են և գործում են ՀՀ օրենսդրության համաձայն,

• գործուսակ ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ:

1.4. Սույն Պայմանների համաձայն՝ Պայմանագրերը/Վկայագրերը կնքվում են ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ հանդիսացող Ապահովագրված անձանց օգտին՝ ՀՀ քաղաքացիների, ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների:

1.5. Պայմանագրով/Վկայագրով ծահառու է հանդիսանում Ապահովագրված անձը, եթե Պայմանագրով Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

• resident or non-resident juridical entities, state or local self-government bodies of the RA, which are registered and acts in accordance with the legislation of the RA;

• natural persons - citizens of the RA, foreign countries' citizens.

1.4. In accordance with the present Conditions Contracts/Policies are concluded on behalf of the Insured persons, which are the citizens of the RA, foreign countries' citizens which are in the territory of the RA.

1.5. The Insured person is the Beneficiary as to the Contract/Policy unless otherwise specified by the Contract/Policy.

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

2.1. Սույնով ապահովագրության օբյեկտ է հանդիսանում ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովագրի կամ Ապահովագրված անձի գույքային շահը՝ կապված ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձի առողջության հետ կապված բժշկական և/կամ այլ ծառայությունների ստացման ծախսերի հետ:

2. THE OBJECT OF INSURANCE

2.1. Hereby the object of insurance is the property interest of the Insured or the Insured person which does not contradict to the law of the RA regarding the charges for medical and/or other services provision in case of insurance accident.

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ

3.1. Ապահովագրական ռիսկն առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ ապահովագրական պատահար տեղի ունենալու հետևանքով առաջացող վնասի հնարավոր մեծությունն է:

3.2. Ապահովագրական պատահար է հանդիսանում Ապահովագրված անձի՝ Պայմանագրի/Վկայագրի պայմանների համաձայն և դրա գործողության ժամանակահատվածում Բժշկական հաստատություն և/կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված այլ հաստատություն դիմելը՝ առողջական վիճակի վատթարացման, վնասվածքի, թունավորման, առողջության պահպանման և բժշկական օգնության ցուցաբերման կարիք ունեցող այլ իրավիճակների կապակցությամբ բժշկական և/կամ այլ ծառայություններ ստանալու նպատակով: Նշված ծառայությունները տրամադրվում են Ապահովագրված անձին Պայմանագրով/Վկայագրով նախատեսված Ծրագրի համաձայն, որը հավելվածի տեսքով կցվում է Պայմանագրին/Վկայագրին և հանդիսանում է Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

3.3. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով, ապահովագրական պատահար չի ճանաչվում Ապահովագրված անձի առողջության հետ կապված բժշկական և/կամ այլ ծառայություն ստանալու համար դիմելը՝

3.3.1. կապված սուր իրավիճակների և վնասվածքների հետ, որոնք առաջացել են կամ ստացվել են ալկոհոլի, թմրադեղերի կամ տոբեֆիկ, հոգեներգործուն դեղերի և/կամ նյութերի ազդեցության հետևանքով,

3.3.2. կապված վնասվածք ստանալու կամ այլ պաթոլոգիական վիճակի հետ, որն առաջացել է Ապահովագրված անձի կողմից հակաիրավական գործողություններ կատարելու արդյունքում, ինչը պետք է հաստատված լինի համապատասխան իրավասու մարմինների որոշմամբ՝ կապված Ապահովագրված անձի՝ սեփական առողջությանը դիտավորյալ վնաս պատճառելու, ինքնասպանության փորձերի և Ապահովագրված անձի այլ դիտավորյալ գործողությունների հետ՝ ուղղված ապահովագրական պատահարի առաջացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը հասցվել է այդ վիճակին այլ անձանց հակաիրավական գործողությունների հետևանքով, ինչը ևս պետք է հաստատված լինի համապատասխան մարմինների որոշումներով:

3.3.3. կապված վնասվածք ստանալու կամ այլ պաթոլոգիական վիճակի հետ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել է այլ անձի կողմից ձեռնարկված գործողության արդյունքում, ով գործել է դե յուրե կամ դե ֆակտո իշխանության բռնազավթման գործողություններ կատարող կամ դրան նպաստող

3. INSURANCE ACCIDENTS AND INSURANCE RISKS

3.1. The insurance risk is the possible value of loss as a result of the insurance accident, which have criterion of likeness to occur and unexpectedness

3.2. An insurance accident is an application by the Insured to a Medical institution and/or another institution provided by the Contract/ Policy or agreed with the Insurer under the terms of the Contract/ Policy and during its period of validity, to receive medical and/or other services in relation to health deterioration, injury, intoxication, and other situations needing health and medical care. These services are provided to the Insured under the Program offered with the Contract/ Policy, which is enclosed as an Annex to the Contract/ Policy and is an integral part of it.

3.3. Unless otherwise specified by the Contract/Policy the accident is considered non-insurance when the Insured person applies for getting medical and/or other service if:

3.3.1. the acute conditions and injuries occurred as a result of alcohol, drugs or intoxication, psychotropic drugs and/or materials,

3.3.2. the injury or pathological condition occurred as a consequence of illegal actions of the Insured person which must be approved by the decision of the appropriate authorized bodies connected with the intention to harm Insured persons' health by him/herself, to commit suicide and other deliberate actions which intentionally made the insurance accident occur, excluding cases when the Assured was led to similar condition as a result of illegal actions of other persons, which also must be confirmed by decisions of competent authorities,

3.3.3. with regard to getting injured or other pathological condition, which was directly or indirectly caused as a result of action, undertaken by other person, who acted de jure or de facto on behalf of organization or together with organization, having performed acts upon assumption of power or having commenced terroristic acts or violence, promoting to



ահաբեկչություն կամ բռնություն նախաձեռնած կազմակերպության անուկից կամ դրա հետ միասին,

3.3.4. առաջացած պատերազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի և այլ զինվորական միջոցառումների, դիվերսիայի, քաղաքացիական պատերազմի, ահաբեկչական գործողությունների, ցանկացած տեսակի ժողովրդական հուզումների կամ գործադուլների, բնական աղետների, բնական կամ տեխնիկական բնույթի արտակարգ իրավիճակների, Էկոլոգիական աղետների հետևանքով:

3.4. եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրման ենթակա չեն այն անձինք, ովքեր Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին՝

3.4.1. 65 (վաթսուհինգ) տարեկանից բարձր են,

3.4.2. հանդիսանում են առաջին կամ երկրորդ խմբերի հաշմանդամներ,

3.4.3. հիվանդ են ՁԻԱՐ-ով կամ հանդիսանում են ՄԻԱՎ վարակակիրներ,

3.4.4. հաշվառված են նարկոլոգիական, նյարդափոփոխական, թոքախտային, ուռուցքաբանական, մաշկավեներական (վեներական հիվանդությունների պատճառով) դիսպանսերներում, ՁԻԱՐ և ՄԻԱՎ-ի բուժման և պրոֆիլակտիկայի կենտրոններում,

3.4.5. գտնվում են ստացիոնար հսկողության տակ,

3.4.6. հետախուզման մեջ գտնվող կամ ազատագրված դատապարտված անձինք:

3.5. Եթե Պայմանագրով/Վկայագրով ապահովագրվել է 3.4. կետի 3.4.3. և/կամ 3.4.4. և/կամ 3.4.6. ենթակետերում նշված կատեգորիաներից ցանկացածի տակ ընկնող անձ, ապա Պայմանագիրը/Վկայագիրը տվյալ Ապահովագրված անձի գծով համարվում է լուծված, իսկ ապահովագրությունը գործողության մեջ չմտած կնքման օրվանից և ապահովագրավճարի վերադարձ չի կատարվում:

4. ԱՊԱՅՈՒՄԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

4.1. Ապահովագրական գումարն Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:

4.2. Ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովագրողի և Ապահովագրողի համաձայնությամբ՝ ելնելով Պայմանագրով/Վկայագրով նախատեսված բժշկական ծառայությունների ցանկից և արժեքից:

4.3. Ապահովագրական գումարը տվյալ օբյեկտի գծով ապահովագրական հատուցման վճարումից հետո նվազում է կատարված հատուցման գումարի չափով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ կամ Ապահովագրողին ապահովագրական հատուցում ստանալուց հետո չի վերականգնել այն:

5. ԱՊԱՅՈՒՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է մինչև մեկ տարի ժամկետով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Պայմանագրում/Վկայագրում:

5.2. Պայմանագիրը/Վկայագիրն ուժի մեջ է մտնում դրա կնքման պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

5.3. Պայմանագրի/Վկայագրի գործողությունն ավարտվում է Պայմանագրում/Վկայագրում որպես ապահովագրության գործողության ավարտի ամսաթիվ նշված ամսաթվի ժամը 23:59-ին, եթե Պայմանագրով/Վկայագրով կամ այլ հանգամանքներով, որոնց տեղի ունենալու դեպքում նախատեսված է ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվից շուտ Պայմանագրի/Վկայագրի դադարեցում, այլ բան նախատեսված չէ:

6. ԱՊԱՅՈՒՄԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳՆԻ, ԱՊԱՅՈՒՄԱԳՐԱՎՃԱՐԻ, ԱՊԱՅՈՒՄԱԳՐԱՎՃԱՐԻ ԶԵՐԹԱԿԱՆ ՄԱՍԻ ՍԱՅՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

it,

3.3.4. as a consequence of military operations, as well as maneuvers and other military activities, sabotage, civil war, terroristic acts, any kind of civil commotions or industrial disturbances, natural disasters, emergency situations of natural or technogenic character, ecological disasters.

3.4. Unless otherwise specified by the Contract/Policy, persons are not subject to be insured who at the moment of Contract conclusion are:

3.4.1. 65 (sixty five) and elder;

3.4.2. handicapped persons of first or second degree;

3.4.3. persons who have acquired immunodeficiency syndrome (AIDS) or is human immunodeficiency virus (HIV) carrier;

3.4.4. Registered at the drug abuse, neurological, tuberculosis, oncological, dermatovenereological (because of venereal diseases) dispensaries, at the preventive and medical centers of AIDS and HIV.

3.4.5. Are under in-patient observation.

3.4.6. Wanted or imprisoned

3.5. If a person insured by the Contract/Policy is referred to any category specified by the sub clauses 3.4.3. and/or 3.4.4 and/or 3.4.6. of the clause 3.4. than the Contract/Policy on the part of that insured person is considered to be resolved and the insurance - not valid from the date of conclusion and no premium return is made.

4. SUM INSURED DEFINITION PROCEDURE

4.1. Sum Insured is a maximum value of possible insurance indemnity to be paid by the Insurer.

4.2. The sum Insured is defined by a mutual consent of the Insurer and the Insured based on the list and costs of the medical services specified in the Contract/Policy.

4.3. After insurance compensation for the given object the insurance amount is reduced by the amount of the compensation made, unless otherwise provided by the Contract/ Policy or if the Insured has not recovered it after receiving insurance compensation.

5. EFFECTIVE PERIOD OF THE INSURANCE CONTRACT/POLICY

5.1. The Contract/Policy is signed for the period of one calendar year unless otherwise specified by the Contract/Policy. The inception date and the end date are mentioned in the Contract/Policy.

5.2. The Contract/Policy comes into force from the moment of the conclusion, unless otherwise specified by the Contract/Policy.

5.3. The Contract/Policy validity ends at 23:59 of the date mentioned in the Contract/Policy as the Insurance period end date, unless otherwise specified by the Contract/Policy or other circumstances, in case of occurring which it is intended cancellation of the Contract/Policy earlier than the end date of the Insurance period.

6. PROCEDURE OF INSURANCE RATE, INSURANCE PREMIUM, INSTALLMENTS DEFINITION



6.1. Ապահովագրավճարող Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովագրողի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումարն է, որն Ապահովագրողը պարտավոր է վճարել Ապահովագրողին՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված կարգով և ժամկետներում: Ապահովագրավճարի հերթական մասը հանդիսանում է ապահովագրավճարի մաս՝ դրա տարածամկետ վճարման դեպքում:

6.2. Ապահովագրական սակագինը սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ կիրառվող ապահովագրավճարի դրույթաչափն է:

6.3. Ապահովագրողն, ապահովագրավճարի չափը որոշելիս, կիրառում է իր կողմից հաստատված ապահովագրական սակագները՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը և ապահովագրական ռիսկի բնույթը:

6.4. Պայմանագիր/Վկայագիր կնքելիս Ապահովագրողը հիմնական ապահովագրական սակագների նկատմամբ իրավունք ունի կիրառելու ճշգրտող գործակիցներ՝ հաշվի առնելով բժշկական և/կամ այլ ծառայությունների ցանկը և որակը, Բժշկական հաստատությունները, սպասարկող ընկերությունները և այլ հաստատությունները, ծածկույթի գործողության գոտիները, գտնվելու տարածքներն, Ապահովագրված անձանց գործունեության բնույթը, կրակային սեռը, տարիքը, ինչպես նաև Ապահովագրողի (Ապահովագրված անձի) կողմից հարցաթերթիկում նշված տեղեկությունները, նախնական բժշկական զննության արդյունքներն, ապահովագրավճարի վճարման կարգը և պարբերականությունը և Պայմանագրով/Վկայագրով նախատեսված այլ պայմաններ:

6.5. Ապահովագրողը կարող է առաջարկել Ապահովագրողին (Ապահովագրված անձին) լրացնել հարցաթերթիկ կամ անցնել նախնական բժշկական զննություն Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս՝ ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման ենթակա չափի որոշման նպատակով, և/կամ Պայմանագրի գործողության ընթացքում: Նախնական բժշկական զննությունն անցկացվում է Ապահովագրողի հաշվին, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Նախնական բժշկական զննությունն անցկացվում է համապատասխան լիցենզիա ունեցող Բժշկական հաստատությունում՝ Ապահովագրողի ընտրությամբ:

6.6. Եթե Ապահովագրված անձը հրաժարվում է Ապահովագրողի պահանջով լրացնել հարցաթերթիկ և/կամ անցնել նախնական բժշկական զննություն, Ապահովագրողն իրավունք ունի մերժել տվյալ Ապահովագրված անձի կողմից ներկայացված ապահովագրության պայմանագրի կնքման ցանկացած հայտ և/կամ Պայմանագրի/Վկայագրի կնքման պահից մինչև նախնական բժշկական զննությունն ընկած ժամանակահատվածում տվյալ Ապահովագրված անձի գծով ներկայացված ապահովագրական հատուցման ցանկացած հայտ քանի դեռ տվյալ Ապահովագրված անձը չի կատարել նշված պահանջը:

6.7. Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրողը կարող է վճարել ապահովագրավճարը միանվագ (մեկ վճարմամբ Պայմանագրի/Վկայագրի ամբողջ ժամկետի համար) կամ տարածամկետ (ապահովագրավճարի հերթական մասի վճարման տեսքով): Ապահովագրավճարն (ապահովագրավճարի հերթական մասը) Ապահովագրողը վճարում է կանխիկ դրամով Ապահովագրողի դրամարկը, Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին կամ անկանխիկ՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Ապահովագրավճարի վճարման օր է համարվում Ապահովագրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի դրամարկը այն վճարելու օրը կամ Ապահովագրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի հաշվարկային հաշվին դրամական միջոցների ստացման օրը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

6.8. Պայմանագրով/Վկայագրով ապահովագրավճարի տարածամկետ վճարում նախատեսված լինելու դեպքում, ելնելով ֆինանսական շուկայի փոփոխություններից՝ Ապահովագրողն իրավունք ունի իրականացնել ապահովագրավճարի վերահաշվարկ՝ հիմք ընդունելով ստորև բերված բանաձևը և ներկայացնելով լրացուցիչ հաշիվ վերահաշվարկված ապահովագրավճարի և բազային ապահովագրավճարի

6.1. The insurance premium is considered to be the sum, which the Insured must pay to the Insurer for the possible insurance indemnity in accordance with the procedures, terms, condition and dates mentioned in the Contract/Policy. The instalment is a part of insurance premium in case of its payment by instalments.

6.2. Insurance rate is a rate of insurance Premium applied to the defined sum insured.

6.3. While defining the insurance premium the Insurer applies the insurance rates approved by him, taking into consideration the insurance object and the nature of the insurance risk.

6.4. The Insurer has right to apply adjusting rates towards the main insurance rates taking into consideration the list and the quality of the medical and/or other services, Medical institutions, service companies and other institutions, zones of the insurance coverage, locations, principal place of business of the Insured persons, the nature of their activity, their gender, age, as well as the information mentioned by the Insured (by the Insured person) in the application form, the results considering the preliminary medical examination, premium payment terms and frequency and other clauses specified by the Contract/Policy.

6.5. The Insurer may offer the Insured (the Insured Person) to fill out a questionnaire or undergo a preliminary medical examination when concluding the Contract/ Policy to determine the premium subject to payment (or the due part of the insurance premium) and/or during the term of the Contract. The preliminary medical examination shall be conducted at the Insurer's expense unless otherwise provided by the Contract/ Policy. The preliminary medical examination shall be carried out at a licensed Medical Institution at the Insurer's choice.

6.6. If the Insured person refuses to fill in the application form and/or to undergo the preliminary medical examination upon the Insurer requirement, the Insurer is authorized to refuse any request to conclude Insurance contract and/or any insurance claim presented by the Insured person within the period from the moment of the Contract/Policy conclusion till the period of passing the preliminary medical examination until the presented requirement isn't fulfilled by the Insured person.

6.7. The insurance premium specified by the Contract/Policy may be paid by lump-sum payment (by one payment for the whole period of the Contract/Policy) or by instalments. The insurance premium (instalment of the insurance premium) the Insured pays by cash to the Insurer's cash desk, to the authorized representative of the Insurer or by transfer to the bank account of the Insurer. Unless otherwise specified by the Contract/Policy the payment date is considered the date when the sum is paid to the cash register of the Insurer or its representative or the date when the funds are settled on Insurer's or its representative's bank account.

6.8. If payment of insurance premium is stipulated in instalments by the Contract/Policy, proceeding from alterations of financial market, the Insurer shall be entitled to implement recalculation of insurance premium, taking as a basis the below mentioned formula and presenting a supplementary account in the amount of variance between recounted insurance premium and basic insurance premium.



տարբերության չափով.

$ՎԱՎ = ԲԱՎ / SO\Phi \times \text{ՎՕՓ}$

ՎԱՎ-ն՝ վերահաշվարկված ապահովագրավճար, ԲԱՎ-ն՝ Պայմանագրում/Վկայագրում/Պայմանագրին/Վկայագրին կից լրացման մեջ նշված բազային/լրացուցիչ ապահովագրավճար, SOՓ-ն՝ Պայմանագրի/Վկայագրի/Պայմանագրին/Վկայագրին կից լրացման տրամադրման օրվա դրությամբ սահմանված ԱՄՆ դոլարի փոխարժեք, ՎՕՓ-ն՝ ապահովագրավճարի հերթական մասի վճարման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ԱՄՆ դոլարի անկանխիկ վաճառքի համար հրապարակված փոխարժեք:

6.9. Եթե Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում ՀՀ օրենսդրության մեջ փոփոխությունների արդյունքում տեղի ունենա բժշկական ծառայությունների և/կամ դեղորայքի գնագոյացման վրա ազդող հարկատեսակների ավելացում, Ապահովագրողը, ելնելով Պայմանագրի/Վկայագրի վնասաբերության մակարդակից, իրավունք ունի վերանայել Պայմանագրի/Վկայագրի գծով յուրաքանչյուր Ապահովագրված անձի գծով ապահովագրավճարը՝ հարկատեսակի ավելացման չափով:

7. ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ԴՐԱ ԿՆՔՄԱՆ, ԴԱՂԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է գրավոր ձևով սույն Պայմանների հիման վրա, որոնք հանդիսանում են Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը: Պայմանագրում/Վկայագրում կարող են նախատեսվել ՀՀ օրենսդրությանը չհակասող և սույն Պայմաններում չնշված այլ դրույթներ: Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի դրույթների միջև տարբերությունների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է Պայմանագրին/Վկայագրին, եթե այն չի հակասում ՀՀ գործող օրենսդրությանը:

7.2. Պայմանագրի/Վկայագրի կնքման համար Ապահովագրողը կարող է դիմել Ապահովագրողին վերջինիս կողմից սահմանված համապատասխան ձևի գրավոր դիմումի միջոցով, որտեղ գետեղվում են ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման համար անհրաժեշտ տվյալները, կամ այլ մատչելի ձևով հայտնել Պայմանագրի/Վկայագրի կնքման մտադրության մասին (բանավոր դիմում, ֆաքս, էլ.փոստ և այլն):

7.3. Եթե Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո պարզվի, որ Ապահովագրողը հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ այն հանգամանքների վերաբերյալ, որոնք ունեն էական նշանակություն ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության և վերջինիս տեղի ունենալու դեպքում հնարավոր վնասների չափը (ապահովագրական ռիսկ) որոշելու համար, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու անվավեր ճանաչել Պայմանագիրը/Վկայագիրը:

7.4. Սույն Պայմաններում ներառված դրույթները, որոնք ընդգրկված չեն Պայմանագրի/Վկայագրի տեքստում, պարտադիր են Ապահովագրողի համար, եթե Պայմանագրում/Վկայագրում ուղղակիորեն նշված է սույն Պայմանների կիրառման մասին, ընդ որում՝ սույն Պայմանների մեկ օրինակ տրվում է Ապահովագրողին, որի վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում Պայմանագրում/Վկայագրում:

7.5. Պայմանագիրը/Վկայագիրը կարող է ներառել տարբեր ճրագրեր, որոնք հավելվածի տեսքով կցվում են Պայմանագրի/Վկայագրին: Պայմանագրում/Վկայագրով կոնկրետ ճրագրի շրջանակներում բժշկական և/կամ այլ ծառայությունների ցանկը, ինչպես նաև ցանկացած ճրագրերի համադրումը կարող են ունենալ ինքնատիպ անվանում:

7.6. Պայմանագրում/Վկայագրում կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար: Պայմանական չհատուցվող գումարի դեպքում Ապահովագրողն ազատվում է Ապահովագրված անձին բժշկական և/կամ այլ ծառայությունների տրամադրման հետ կապված ծախսերի հատուցումից, եթե դրանց չափը չի գերազանցում պայմանական չհատուցվող գումարը, իսկ եթե չհատուցման ծախսերը գերազանցում են չհատուցվող գումարի մեծությունը, ապա

RIP=BIP/PDR x PDR
RIP – recalculated insurance premium
BIP – basic/additional insurance premium, mentioned in the Contract/Policy in the annex, attached to the Contract/Policy
PDR – USD rate, determined on the day of providing the annex of the Contract/Policy, attached to the Contract/Policy,
PDR- USD cashless sell rate, determined by the Central Bank of the RA for the day of instalment premium payment,

6.9. If during the Contract/Policy effective period addition of tax types takes place as a result of alterations in the RA legislation, that will influence on price formation of medical services and/or medications, the Insurer, proceeding from the unprofitability level of the Contract/Policy, shall be entitled to review the insurance premium upon each Assured in the amount of tax type addition.

7. PROCEDURE OF INSURANCE CONTRACT/POLICY CONCLUSION, CANCELLATION AND AMENDMENTS IMPLEMENTATION

7.1 The insurance Contract/Policy is signed in written way on the basis of the present Conditions which are considered an integral part of the Contract/Policy. Other clauses may be specified by the Contract/Policy, which are not mentioned in the present Conditions and are in accordance with the legislation of the RA. In case of differences between the clauses of the Conditions and the Contract/Policy the Contract/Policy is privileged, if it is not contradict to the legislation of the RA.

7.2. For a Contract/Policy conclusion the Insured may apply to the Insurer by an application formed by the Insurer, where the information is included, which is necessary for a Contract/Policy signing or can inform about intention to sign a Contract/Policy by other more optimal way (orally, fax, e-mail, etc.).

7.3. If after the signing of the Contract/Policy it becomes known that the Insured has provided obvious false information concerning to the circumstances which are essential to the possibility of the insurance accident occurrence and for defining the value of loss (insurance risk) as a result of it, the Insurer is authorized to request the Contract/Policy invalidation.

7.4. Clauses included in the present Conditions which are not included in the Contract/Policy text are obligatory for the Insured if it is directly mentioned in the Contract/Policy about the appliance of the present Conditions. One copy of the present Conditions is being provided to the Insured and it is being noted in the Contract/Policy.

7.5. The Contract/Policy may include different Programs, which are being attached to the Contract/Policy as appendices. A list of medical and/or other services within a certain Program, as well as the combination of different insurance programs may have peculiar name by the Contract/Policy.

7.6. Conditional or unconditional deductible may be determined in the Contract/Policy. In case of conditional deductible the Insurer shall be released from the indemnity of expenses upon providing medical and/or other services to the Assured, if their amount does not exceed the conditional deductible amount; and in case, if the indemnity expenses exceed the deductible amount, the Insurer shall be obliged to pay the indemnity completely.
In case of unconditional deductible the responsibilities of the Insurer are



Ապահովագրողը պարտավորվում է վճարել հատուցումն ամբողջությամբ: Ոչ պայմանական չհատուցվող գումարի դեպքում Ապահովագրողի պարտականությունները որոշվում են ծախսերի չափով՝ հաշվանցելով չհատուցվող գումարը: Չհատուցվող գումարը որոշում են Կողմերը՝ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով կամ կոնկրետ գումարով:

7.7. Պայմանագրի/Վկայագրի հետ միաժամանակ Ապահովագրի (Ապահովագրված անձին) կարող է հանձնվել ապահովագրական քարտ (պլաստիկ և/կամ այլ): Ապահովագրական քարտը համարվում է անվանական փաստաթուղթ և ներառում է հետևյալ տեղեկությունները՝ Պայմանագրի/Վկայագրի (ապահովագրական քարտի) սերիան և համարը, Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտը, բժշկական և այլ հաստատությունների տեղեկատվական հեռախոսահամարներն, Ապահովագրի (Ապահովագրված անձի) անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը, Ապահովագրողի կոնտակտային հեռախոսահամարները և այլ տեղեկություններ:

7.8. Ապահովագրի (Ապահովագրված անձին) արգելվում է փոխանցել Պայմանագրի/Վկայագրի (ապահովագրական քարտն) այլ անձի վերջինիս կողմից Պայմանագրի/Վկայագրով ծառայություններ ստանալու նպատակով: Պայմանագրում/Վկայագրում որպես Ապահովագրված անձ չընկած անձանց մատուցված ծառայությունների ծախսերն Ապահովագրողի կողմից չեն հատուցվում:

7.9. Եթե Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովագրի աշխատող հանդիսացող անձը չի ընդգրկվում Պայմանագրի/Վկայագրի ներքո ապահովագրվող անձանց ցուցակում, ապա Պայմանագրի գործողության ընթացքում այլևս չի կարող ապահովագրվել: Բացառություն են կազմում այն անձինք, ովքեր Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին հանդիսացել են ուսուսակ, փորձնակ կամ գտնվել են փորձաշրջանում և Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում դարձել են Ապահովագրի աշխատող:

7.10. Պայմանագրի/Վկայագրի գործողության վաղաժամկետ դադարեցման դեպքում ապահովագրական քարտերը վերադարձվում են Ապահովագրողին դադարեցման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

7.11. Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ դադարում է, և Ապահովագրված անձը կորցնում է Պայմանագրի/Վկայագրի գծով ծառայություններ ստանալու իրավունքը՝

7.11.1. եթե Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահար տեղի ունենալու հնարավորությունը և ապահովագրական ռիսկի առկայությունը դադարել են ապահովագրական պատահարից տարբեր հանգամանքների բերումով, մասնավորապես՝ Ապահովագրված անձի մահվան դեպքում,

7.11.2. Ապահովագրողի կողմից Պայմանագրի/Վկայագրով սահմանված պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու դեպքում, մասնավորապես՝ Պայմանագրի/Վկայագրի գծով ապահովագրական գումարի ամբողջ չափով ապահովագրական հատուցում իրականացնելու դեպքում,

7.11.3. իրավաբանական անձ հանդիսացող Ապահովագրի սնանկ ճանաչվելու դեպքում՝ համապատասխան որոշման ուժի մեջ մտնելու պահից,

7.11.4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի լուծարման դեպքում,

7.11.5. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, այդ թվում՝ դատարանի որոշմամբ:

7.12. Պայմանագրի/Վկայագրի կարող է լուծվել հետևյալ դեպքերում.

7.12.1. կողմերի համաձայնությամբ,

7.12.2. Ապահովագրի նախաձեռնությամբ,

7.12.3. Ապահովագրի կողմից Պայմանագրի/Վկայագրի/Պայմանների դրույթների խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ,

7.12.4. Ապահովագրողի կողմից Պայմանագրի/Վկայագրի/Պայմանների դրույթների խախտման համար Ապահովագրի նախաձեռնությամբ,

7.12.5. Պայմանագրի/Վկայագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

7.13. Պայմանագրի/Վկայագրի կարող է Ապահովագրողի կողմից վաղաժամկետ լուծվել Ապահովագրի կողմից

specified by the amount of charges by deducting the sum of deductible. The deductible is defined by the parties either as a percentage toward the sum Insured or by absolute value.

7.7. An insurance card (plastic etc.,) is provided to the Insured (Insured person) therewith the Insurance Contract/Policy. The insurance card is considered a nominal document and includes the following information - serial number of the insurance Contract/Policy (insurance card), the end date of the Contract/Policy, phones of the medical and other institutions, phone numbers of the Insurer).

7.8 The Insured (Insured person) is not allowed to forward its Policy (insurance card) to another person for the purpose of getting services specified by the Contract/Policy. No expenses of persons are covered by the Insurer if the person is not included in the Contract/Policy as an Insured person.

7.9. If the person, considered as the Insured's employee, while signing the Contract/Policy is not included in the list of persons, being insured upon the Contract/Policy, he cannot be insured any more during the Contract/Policy effective period. Those persons, who were practitioners, trainees or were on probation period and became the Insured's employees during the Contract/Policy effective period, are considered as exceptions.

7.10. In case of premature termination of the Contract/Policy the insurance cards must be returned to the Insurer within three working days.

7.11. The Contract/Policy terminates prematurely and the Insured person is not to obtain the services specified by the insurance Contract/Policy in the following cases:

7.11.1. in case after the Contract/Policy coming into force the possibility of the insurance accident occurrence and the existence of the insurance risk have terminated by various circumstances, particularly in case of Insured person's death;

7.11.2. in case the Insurer fulfils its obligations specified by the Contract/Policy in full, particularly in case of paying the insurance reimbursements in full insurance premium as to the Contract/Policy;

7.11.3. in case of insolvent of the Insured (legal entity) after the corresponding decision come into force;

7.11.4. in case of the Insurer liquidation specified by the legislation of the RA;

7.11.5. in other cases specified by the legislation of the RA, including the court decision.

7.12. The Contract/Policy can be cancelled in the following ways:

7.12.1. by the mutual agreement of the parties

7.12.2. on the Insured's initiative

7.12.3. for the violation of the Contract/Policy/Conditions' terms by the Insured by the initiative of the Insurer

7.12.4. for the violation of the Contract/Policy/Conditions' terms by the Insurer by the initiative of the Insured

7.12.5. in other cases specified by the legislation of the RA.

7.13. The Contract/Policy can be prematurely cancelled by the Insured as to the specified terms of the Contract/Policy and/or the present



Պայմանագրով/Վկայագրով և/կամ սույն Պայմաններով սահմանված կարգով և ժամկետներում ապահովագրավճարող կամ ապահովագրավճարի հերթական մասը չվճարելու դեպքում՝ ապահովագրության չվճարված ժամանակահատվածի (ժամկետի) սկզբի ամսաթվից:

7.14. Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մտադրության մասին կողմերը պարտավոր են ծանուցել միմյանց ոչ պակաս, քան Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման ենթադրվող ամսաթվից 15 (տասնհինգ) օր առաջ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

7.15. Ֆիզիկական անձ Ապահովագրի իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը/Վկայագիրը դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (այսուհետ՝ մտածելու ժամանակ):

